

ու ջերմութիւնը: Յետոյ այդ ամանը երկնա-
կամարին վրայ հաստատեց՝ բերանը դէպ ի
երկիր դարձուցած, այնպէս որ անոր լոյսն
ու տաքութիւնը երկրի վրայ կը յորդէ: Իսկ
հիմայ մեր տեսած արեգակը «կճուճի»ն բե-
րանն է:

Արեւու մասին ժողովրդական ըմբռ-
նումները համատարած ովկիանի մը կը
նմանին, որուն մէջ սուղուած է ազգերու
ոամիկ հաւատքը: Մենք քանի մը կաթիլ
միայն դուրս հանեցինք այդ ծովէն եւ հա-
մառօտ զննութեան մ'ենթարկեցինք:

* Ա. Գ.



ԳԵՐՁԵԱԼ «ՄԻԽԹԱՐԵԱՆ» ԸՆՈՒՆ ՅՈՒՐՋ

1837ին Eugène Boré այցելած է Վիեննա,
Միխթարեանց վանքը. իւր տպաւորութիւն-
ներն եւ յիշողութիւնները գրի առած է ապա
նոյն տարւոյն Նոյեմբեր 16ին ի Տրիեստ:
Հոս ի մէջ այլոց կը խօսի Բորէ Միարանու-
թեան ի Տրիեստ սկզբնաւորութեան մասին.
եւ կը գրէ¹. «Le vénérable supérieur, Dieu-
donné Babik (իմա՛ Աստուածատուր Բաբի-
կեան), avait été sacré en 1800, à Venise,
archevêque d'Eczmiazin; et, le premier, il
avait donné à ses religieux le nom de Méchitharistes, [իմա՛ 1773ին] que ne portaient
point encore les pères de Saint-Lazare, appelés
alors Antoniens, du nom de Saint-Antoine,
dont ils avaient pris d'abord la règle pour
base».

Այս տեղեկութիւնները լսած է Բորէ
անշուշտ ի Վիեննա, ծերագոյններէ եւ Գեր.
Բաբիկեանի († 1825) աշակերտներէն:
1840ին, երբ լոյս տեսաւ է. Բորէի գրու-
թիւնը, Ս. Ղազարու ծերագոյնները չրո-
ղոքեցին անոր տողերու դէմ. անոնք լռեցին
նաեւ 1893ին, երբ Հ. Գ. Գալէմբեարեան
նոյն միտքը կը կրկնէր. դար մը ետքը
միայն (1926) կ'անդրադառնան Ս. Ղազարու
Մեծ. Հարք մտքի մը անճշգրտութեան, որ
90 տարիէ ի վեր հրապարակին սեպհակա-
նութիւնն եղած էր: Չէր կրնար պահան-

ջուիլ ոչ Հ. Գալէմբեարեանէ եւ ոչ Հ. Ակի-
նեանէ, որ անոնք է. Բորէի տողերու ստու-
գութիւնը փորձէին Ս. Ղազարու Դիւանին
մէջ պահուած վաւերագիրներու հիման
վրայ²: Այս պարտքն էր անոնց, որոնք
կը կասկածէին Բորէի արժանահաւատու-
թեան վրայ եւ կարող էին հերքել տուեալ-
ներու հիման վրայ:

Բայց եւ այնպէս ես փորձեցի քրքրել
հրապարակի վրայ ծանօթ եւ անծանօթ
գրքեր եւ թղթեր (տե՛ս Հ ա ն դ է ս Ա մ Է
ս օ ր ե ա յ, 1929, էջ 525—532) եւ փորձի
ենթարկել Բորէի տողերուն արժանահաւա-
տութիւնը. իմ զննութիւններուս արդիւնքը
լիովին արդարացուց անոր տողերու ստու-
գութիւնը եւ պատմութեան հետ համաձայ-
նութիւնը:

Բայց Մեծ. Հ. Ղ. Տալեանի համար հա-
մողիչ չեն երեւցած իմ ապացոյցներս: Եւ
կը դանդաղ գինքը միւսանգամ խորամուխ
Ս. Ղազարու Դիւանին մէջ, ուր կը հետա-
գօտէ թղթեր եւ արձանագրութիւններ, ցոյց
տալու համար ի նպաստ «Միխթարեան» ա-
նուան նոր տեղիքներ 1774 թուականէն յա-
ռաջ: Իր աշխատութիւնը ընդունայն չէ
եղած. դտած է 60 տեղիք 1752—1772 շրջա-
նէն, ուր կը յիշատակուի նոյն յորջորջանքը
մասնական եւ հաւաքական ձեւի մէջ:

Այս նոր դիւանական նիւթերէն կը տես-
նուի թէ՛

ա. Կան ի Ս. Ղազար անհատներ
(5 թուով), որոնք սիրած են իրենց անուան
կից անբաժին կրել «Միխթարեան» յորջոր-
ջումը:

բ. Կան ուրիշներ, որոնք պատահաբար
միայն ստորագրած են իրենց թղթերու տակ
«Միխթարեան», ասոնց թուին մէջ է նաեւ
Գեր. Ս. Մելքոնեան Արքահայր:

գ. Կան տեղիքներ, ուր նաեւ արտա-
քինք, նոյն իսկ անգամ մը Հոռմի Դիւանէն
(1762) Ս. Ղազարու Հայ Միանձանց համար

² Վիեննայի Միխթարեան Դիւանին հաղորդի
նիւթերը կը սկսին 1770ական շրջանէն: Ասոնք բե-
րուած են Ս. Ղազարէն հաւանորէն այն Հայերու
ձեռնով, որոնք յընթաց 1773—1774 տարիներուն
եկան յարեցան ի Տրիեստ ապաստանարան գտած եր-
կու տարագրեալներուն: Անոնց թուին մէջ էին
այլ 15 Հայեր: Ոմանք ապա չկարենալով դիմանալ
Տրիեստեաններու տնտեսական ծանր պայմաններուն՝
եկին վերադարձան ի Ս. Ղազար, Ազոնց Գեր.
Մելքոնեանի մահուանէ յետոյ ընտրուեցաւ Ընդհան-
րական Արքայ: Բուզայեան հետք տարաւ Մուրու-
տեան կտակը:

¹ E. Boré, Correspondance et mémoires d'un
voyageur en Orient. t. I. Paris 1840, p. 57.

գործածած են «Մխիթարեանք» անուանա-
կոչութիւնը:

Գ. Կը հրատարակուի կնիք մը, որ ունի
վերադրութիւնս. «Ընդհանրական Արքայ
Մխարանութեան Մխիթարեանք»:

Այս ամէնը այժմ միայն հրապարակ կու
գայ Ս. Ղազարու Դիւանէն. ոչ մի նոր տե-
ղիք հրապարակի վրայ ծանօթ ազդելու-
ներէ:

Դժբախտաբար Մեծ. Հ. Ղ. Տայեան
իւր հետազոտութիւններուն ընթացքին աւե-
լորդ համարած է կազմել ցանկ մըն ալ այն
տեղիքներուն, ուր փոխանակ «Մխիթա-
րեան» անուան, գործածուած են ուրիշ բա-
ցայայտիչներ: Ասոնք հետաքրքրական են
ցոյց տալու համար թէ ինչպէս Մխարանու-
թեան յորջորջանքը աստիճանական փոփո-
խութիւններէ յետոյ³ ի վերջոյ գտաւ իւր
վերջին ձեւը:

Նկատմամբ մեր առաջ գրուած նոր նիւ-
թերուս հետեւեալ դիտողութիւնները պիտի
ընեմ.

1. Թէ Գեր. Արքահայրը եւ Մխարանու-
թեան ինչ ինչ անձինք գործածած են երբեմն
երբեմն իրենց անուան կից «Մխիթարեան»
յորջորջումը, ծանօթ էր արդէն. վկայու-
թիւններու առաւելութիւնն կամ նուազու-
թիւնը չի փոխեր խնդրին էութիւնը: Որով-
հետեւ կան 60 տեղիքներու դէմ աւելի մե-
ծաթիւ տեղիքներ, ուր «Մխիթարեան» ա-
նունը չէ յիշուած, ուստի ապացոյցներու
ոյժը կը մնայ դարձեալ անհաստատ:

2. Խնդիրը բառին առ հասարակ գոր-
ծածութեան մասին չէ, այլ թէ այն առա-
ջին անգամ ի Ս. Ղազար թէ ի Տրեխտ
Մխարանութեան պաշտօնական անունը հրա-
տարակուեցաւ եւ այնպէս մնաց հրապարա-
կին վրայ:

3. Անուան մը առտնին գործածութիւնը
չի տար անոր հրապարակային եւ պաշտո-
նական նկարագիր. մանաւանդ երբ այն ի
կիրառութեան ըլլայ ապաստան անունը
կանայ քմահաճոյքին: Պաշտօնական վարչու-
պարտաւորիչ է Մխարանութեան վարչու-
թեան համար. նոյնը հարկադրիչ նաեւ մաս-
նական համար:

³ Ի մէջ ընդունուած տեղիքներէն կը տեսնուի, որ
Ս. Ղազարու Հարք կոչումը 1757ին՝ 2, 1758ին՝ 2,
1752ին՝ 10, 1753—1755 ընտ., 1764ին՝ 1, 1765ին՝ 16, 1766ին՝
1759ին՝ 1, 1760—1764ին՝ 10, 1769ին՝ 1, 1770 եւ
15, 1767ին՝ 2, 1768ին՝ 1 անգամ. ուստի մերձեւա-
1771ին՝ ընտ. եւ 1772ին 1 անգամ. իսկ զէպի 1773 կամայ
կամ գործածութենէ դադարած է նոյն յորջորջանքը:

նականներու համար: Անուան միօրինակ
գործածութիւնը⁴ նաեւ արտայայտիչը պիտի
նկատուի ներքին հրահանգաւորման միան-
ձանց եւ նոյնը իւր արձագանգը հնչեցու-
ցած պիտի ըլլայ նաեւ առ արտաքս:

4. Անուն մը, որ պաշտօնապէս իւրա-
ցուած է Մխարանութեան կողմանէ, նոյնը
տեսանելի պիտի ըլլայ նաեւ հրապարակի
վրայ՝ բարձրակառոյց շինուածքներու, խո-
րանիստ շէրիմներու եւ առ հասարակ մա-
մուլի արտադրութիւններու վրայ: Երբ ես
հարցուցի այդ յուշակերտներուն, անոնց
պատասխանը չհնչեց ի նպաստ Ս. Ղազարու
Հայ Միանձանց: Եւ ես ոչինչ չթաղցուցի,
ոչինչ չկեղծեցի:

5. Եթէ ստուգելու որոշում մը կայացած
է ի Ս. Ղազար, 1750—1773 ըրջանին, Միա-
բանութեան անունը ի նորոյ կնքել յանուն
Երանանորհ Հիմնադրին «Մխիթարեան»,
այս մասին արձանագրութիւն մը պահուած
պիտի ըլլայ Մխարանութեան Ընդհանուր
կամ Մասնական Ժողովներու Գործերու
մէջ: Այս անուանափոխութեան մասին հա-
ւանական է կարծել թէ ծանուցուած պիտի
ըլլայ ապա պաշտօնապէս նաեւ ի Հոռմ Բա-
հանայապետական Դիւանին եւ ի Վենետիկ՝
Իտալական Հանրապետութեան եւ վերջա-
պէս Առաքելութեան մէջ գտնուած Հայրե-
բուն: Արդ եթէ այսպիսի քայլեր առնուած
են, յուսալի է դեռ գտնել որոշմանց եւ յայ-
տարարութեանց պատճենները Ս. Ղազարու
Դիւանին մէջ: Պիտի փափագէի առաջարկել
Ս. Ղազարու Դիւանին քաջածանօթ Մեծ.
Հ. Ղեւոնդին՝ շարունակել իւր պրպտում-
ները այս ուղղութեամբ ալ:

6. Մեզի ուրախալի առիթը կ'ընծայուի
ծանօթանալու Ս. Ղազարու Դիւանին մէջ
պահուած Մխիթարեան հին կնիքի մը հետ,
որ կը կրէ վերադրութիւնս. ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏ
ԱՐԽԱՅՈՒՄԻԱՆՍԻՆԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒՐԱՆՑ:
Արքահօր փոքր կնիքն է. Դիւանին մէջ ասոր
Արքահօր փոքր կնիքն է:

⁴ Թէ որքան չփոթեցնող է անուան անմիօրին-
ակ գործածութիւնը, կը տեսնուի Պր. Յ. Միրունիի
տողերէս, ուր խօսելով Եղիսարեթուպոլսոյ Միա-
թարեան Դպրոցի մասին կը գրէ.
«Դպրոցը կը վարէին Անտոնեան Հայրերը,
Մխիթարեանց ենթակայ, իսկ վերատեսուին էր
Եղիսարեթուպոլսոյ Ժողովրդապետը... Դպրոցի
մէջ Անտոնեան Հայրերուն եւ միւս կողմէ քաղա-
շուքը երկար տարիներ կը տեսնէ վէճերը մէկ կող-
մէ Անտոնեան Հայրերուն...» (Հայրենիք ամսագիր,
բային վարչութեան կողմէ...» (Հայրենիք ամսագիր,
1929, Դեկտ., էջ 137): Պր. Միրունի յայտնաբեր-
ած չփոթած է «Անտոնեան» յորջորջումէն եւ կարծած
է թէ Եղիսարեթուպոլսոյ կը գտնուին Մխիթարեան-
նէրէ գտնուած «Անտոնեան Հայրեր», բայց ենթա-
կայ Մխիթարեաններուն (!):

առնթեր կայ աւելի հետաքրքրականը՝ Աբրահամ Բեդկնիքը՝ վերտառութեամբս ԸՆԴՀԱՆՐԱՍԱՆ ԱՅԲԱՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻԱՆՁԱՅ ՀԱՅՈՅ ՄԽԹԱՐԵԱՆՅ, որ թերեւս հրատարակել նախընտրելի էր, իբրեւ աւելի պաշտօնական կնիք, ուր Միաբանութեան հին եւ նոր յորջորջումներն ալ պահուած են՝ առանց զիրար խանգարելու: Բայց ցանկալի էր հնասէններուն զիտնալ թէ ո՞ր թուականէն սկսեալ ի գործածութեան են այս կնիքները: Փոքր կնիքի վրայ կէտ մը ուշադրաւ է, որ եթէ Միաբանութեան Դիւանէն չելլէր, կասկածելի պիտի ընէր անոր հարազատութիւնը: Երանաշնորհ Միաթար Աբրահայր սահմանած էր Միաբանութեան կնիքին վրայ դրոշմել հետեւեալ գրերը. խաչին վերը՝ Որդեգիր, աջ թեւին վրայ՝ Կուսի, ձախ թեւին վրայ՝ Վարդապետ եւ ստորեւ Ապաշխարութեան: Այս տեղ կնիքին վրայ կը նկատուի՝ աջ թեւին վրայ՝ Վ եւ ձախին վրայ՝ Կ: Այս փոփոխութիւնը արդեօք պարզապէս փորագրչի՞ն սխալմունքէն է, թէ փորագրել տուողը նպատակով մը այսպէս կարգադրած՝ հակառակ Հիմնադրին բացայայտ կամքին: Տրիեստեան Վիեննական Միաթարեանց կնիքներուն վրայ ճշդիւ պահպանուած են Երանաշնորհ Հիմնադրին հրահանգները:

7. Այս կնիքին բանաձեւը կազմուած է համաձայն 1763ի Սահմանադրութեան: Սահմանադրութիւնը թէեւ կը պահանջէ կնիքին վրայ «Միաթարեանց» յորջորջանքը, բայց այլուր ոչ մի ակնարկութիւն չունի Միաբանութեան պաշտօնական անունի մասին: Մինչեւ անգամ շատ կարելոր պարագայի մը մէջ, ուր Աբրահայր տեղապահը առթիւ ընտրութեան նոր Աբրայի պիտի երդնու պաշտօնապէս ի լուր ժողովական Հարց, կը սահմանէ երգման բանաձեւ. «...երդնում... զայն ոք ընտրել յընդհանրական Աբրայ այսր Միաբանութեան Ս. Անտոնի Աբրայի զոր ըստ Աստուծոյ արժան համարեցիմ ընտրել» (Ե. 15). բայց քիչ յետոյ կ'արձանագրէ քարտուղարը ժողովոյն որոշումը. «...անուանեմ զԳեր. Հ. Ա. Ա. յընդհանրական Աբրայ Միաբանութեան Միաթարեանց ի կարգէ Ս. Անտոնի»... (Ե. 21): Ուստի չի ճանչնար Սահմանադրութիւնը տակաւին որոշ բանաձեւ մը, պաշտօնական յորջորջանք մը Միաբա-

նութեան համար: Եւ պէտք է նկատել որ Սահմանադրութիւնս մինչեւ 1774 Ապրիլ չունեցաւ գործնական նշանակութիւն եւ առաջին անգամ նոյն թուին ինչ ինչ մասերու մէջ պարտաւորիչ հրատարակուեցաւ:

Է. Բորէի խօսքը թէ «Միաթարեան» անունակոչութիւնը առաջին անգամ Գեր. Ա. Բարիկեան տուած է Տրիեստեան Միաբանութեան, կ'ենթադրէ թէ իրեն քաջածանօթ էր Ս. Ղազարու Միաբանութեան հին պաշտօնական անունը, ալլաղդ աւելորդ պիտի ըլլար մասնաւոր շեշտ մը դնել այս կէտին վրայ եւ զայն արժանիք մը համարել:

Կը մնայ մեզ իբրեւ «վերջին խօսք», ըստ պահանջման Մեծ. Հ. Ղեւոնդ Տայեանի ըսել հրապարակաւ.

1. Դիւանական թղթերը ցոյց կու տան թէ ի Ս. Ղազար եղած է սովորութիւն 1750—1773 շրջանին գործածել կից «Միանձունք Հայոց, Անտոնեանք, Աբրայեանք» եւ այլ յորջորջումներու երբեմն նաեւ «Միաթարեան»: Վերջին ձեւս գտած է արձագանք նաեւ արտաքիններու քով, բայց հազուադէպ անգամներ:

2. «Միաթարեան» յորջորջումը ի Ս. Ղազար միայն առտնին թղթակցութիւններու մէջ կ'երեւայ: 1750—1800 չի տեսնուիր այն հրապարակի վրայ՝ գրքերու, եկեղեցիներու, դերեղմանքարերու վրայ:

3. Վիեննայի Միաթարեանները ժառանգած են իրենց նախնիներէն աւանդութիւն մը, թէ առաջին անգամ Գեր. Հ. Աստուածատուր Բարիկեան անունանւած է պաշտօնապէս Միաթարեան իւր Միաբանութիւնը ի Տրիեստ 1773ին: Աւանդութեանս արտաքին հնագոյն վկայ ունինք է. Բորէ, որ 1837ին արձանագրած է զայն իւր Յիշողութիւններու մէջ. առ այս ի հաստատութիւն կան հրապարակի վրայ աղաղակող ապացոյցներ սկսեալ 1774էն:

Այսպէս ուրեմն հարկ կ'ըլլայ կրկնել. «Ինչ որ տարիներով ցանկութիւնն եղած էր անհատականներու սրտին ի Ս. Ղազար, ի Տրիեստ կ'երականանար 1773ին»:

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

